ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԱՊԵՏԻ ՓԱՆՈՍՅԱՆ

(ծննդյան 75-ամյակի առթիվ)

Կան մարդիկ, որոնք երկարամյա անբասիր աշխատանքով գիտելիքներ ու փորձ կուտակելով, հավերժանում են գիտության պատմության բնագավառում։ Այդպիսին է հանրապետության մանրէաբանության հիմնադիրներից մեկի՝ ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հարություն Կարապետի Փանոսյանը։



Հ. Փանոսյանը ծնվել է 1906 թ. Փոքր Հայքի՝ Սեբաստիայի, Ջիֆլիկ գյուղում։ Մանուկ հասակում զրկվելով ծնողներից, նա Թուրքիայից գաղթել է Սովետական Հայաստան, որտեղ և անց է կացրել իր մանկությունը որբանոցում։ Ավարտել է Երևանի պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը, պաշտպանել թեկնածուական (1936 թ.) և դոկտորական (1943 թ.) դիսերտացիաներ, ղեկավարել Հայաստանի միկրոբիոլոգիական միտքը, ընտրվել ՀՍՍՀ Գա թղթակից անդամ։ Ահա նրա կյանքի ուղին, որը Հ. Կ. Փանոսյանն անցել է սովետական իշխանության հոգատարության, ինչպես նաև իր աշխատասիրության ու տաղանդի շնորհիվ։

Նա իր աշխատանքային գործունեության առաջին իսկ օրերից ակտիվ մասնակցություն է ունեցել Հայաստանում մանրէաբանական գիտության ստեղծման և հետագա զարգացման գործում։ Տաղանդավոր գիտնականի և կազմակերպչի ջանքերով 1943 թ. ՀՍՍՀ ԳԱ սիստեմում ստեղծվել է միկրոբիոլոգիայի սեկտոր, որի առաջին տնօրենը եղել է Հ. Փանոսյանը։

Բեղմնավոր է պրոֆեսոր Հարություն Փանոսյանի գիտական գործունեությունը։ Նրա գրչին են պատկանում մի քանի մենագրություններ և 120-ից ավելի գիտական ու գիտահանրամատչելի հոդվածներ։ Դեռ պատանի հասակից Փանոսյանին հետաքրքրել է Հայաստանի աղակալած հողերի կենսաբանական հատկությունները, որոնց բազմակողմանի ուսումնասիրությունների շնորհիվ կարողացել է լուծել բազմաթիվ ուշագրավ հարցեր։ Նա առաջինն էր, որ նկարագրեց աղուտներին յուրահատուկ, հատկապես ծծումբն ու ծծմբային հրաքարն օքսիդացնող, մանրէները, որը նորություն էր գիտության համար։

Հ. Փանոսյանն իր թեկնածուական դիսերտացիայում հանգամանորեն շարադրել է աղուտների յուրացման տեսական ու գործնական հիմունքները։ Այդ դիսերտացիան տպագրվել է որպես մենագրություն և արժանացել Հայաստանի Լենինյան կոմերիտմիության 20-ամյակին նվիրված մրցանակաբաշխության առաջին մրցանակին, իսկ նրա դոկտորական դիսերտացիան նվիրված է Հայաստանի աղուտների մանրէաբանության ուսումնասիրություններին՝ նրանց յուրացման կապակցությամբ։ Աղուտների յուրացման խնդրի հիմքում դրել է այդ հողերի բաղադրության մանրազնին ուսումնասիրության հարցը և ուղիներ հարթել մանրէաբանական ու քիմիական ճանապարհներով հողն աղազերծելու գործում։ Հ. Փանոսյանը բացահայտել է, որ աղային հողերը տարբերվում են իրենց միկրոֆլորայի կազմով։ Կեղևակալած աղուտներում ավելի շատ են տարածված միկրոօրգանիզմների առանձին ֆիզիոլոգիական խմբեր, քան ուռուցիկ կամ թաց աղուտներում։ Նա ցույց է տվել, որ աղուտներում տարածված ամոնիֆիկատորները, ազոտֆիքսատորները և ծծումբ օքսիդացնող բակտերիաները, հարմարվելով աղերի բարձր պարունակությանը և օսմոտիկ ճնշմանը, ձևոք են բերում մորֆոլոգիական տարբեր հատկանիշներ։ Մանրէաբանական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա Հ. Փանոսյանը առաջարկել է աղուտները մշակել գիպսով, ծծումբով կամ կոլչեդանով, որոնք նպաստում են մանրէաբանական պրոցեսների ակտիվացմանը։

Հարություն Փանոսյանի գրչին են պատկանում նաև մի շարք մենագրություններ։ Նա 1957 թ. հրատարակել է «Ընդհանուր մանրէաբանության հիմունքները», իսկ 1962 թ. «Գյուղատնտեսական միկրոբիոլոգիա» աշխատությունները, որոնք այդ թեմային նվիրված առաջին հայերեն ձեռնարկներն էին։ 1975 թ. լույս տեսավ Հ. Փանոսյանի «Մթնոլորտային ազոտի կենսաբանական ֆիքսացիան Հայկական ՍՍՀ հողերում» մենագրությունը, որը նվիրված է Հայաստանի հողերում ղարդացող մի շարք միկրոօրգանիզմների կենսաբանական առանձնահատկությունների ուսումնասիրությանը և դրանց կողմից մթնոլորտային ազոտի յուրացման ինտենսիվացմանը՝ կապված բույսերի աճման ու ղարդացման հետ։

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում նրա աշխատանքներն ազոտաբակտերների արդյունաբերության ուսումնասիրության վերաբերյալ։ Հ. Փանոսյանը գործնականում ցույց է տվել, որ ազոտաբակտերների կիրառմամբ կարելի է բարձրացնել հացահատիկային և տեխնիկական կուլտուրաների բերքատվությունը։ Նա առաջինը ազոտաբակտերները և բակտերիալ ակտիվատորները համատեղ կիրառել է գյուղատնտեսության մեջ, որը նպաստել է բերքատվության բարձրացմանը։

Հ. Փանոսյանը շուրջ 25 տարի ղեկավարել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի ֆիզիոլոգիայի և մանրէաբանության ամբիոնը։ Նրա ղեկավարությամբ մեր հանրապետությունում աճել են մեծ թվով մանրէաբան-գիտնականներ։ Նրա աշակերտներից շատերն այժմ ճանաչված գիտնականներ են, դիտության հմուտ կազմակերպիչներ։

Սովետական կառավարությունը բարձր է գնահատել Հ. Կ. Փանոսյանի դիսամանկավարժական գործունեությունը։ Նա պարգևատրվել է Լենինի, Աշխատանքային կարմիր դրոշի, «Պատվո նշան» և այլ շքանշաններով ու մեդալներով։

Վաստակաշատ մանկավարժի և գիտնականի գիտական հարուստ ժառանգությունը դեռ երկար տարիներ օգտակար կլինի գալիք սերունդներին։